ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Սույն աշխատանքային նախագիծը կազմված է համաձայն «Հայմուսգազարդ» ՓԲԸ № ARG-05-31/1052 գրության, տրված 07.04.2011թ գրության, ԳԲՅԾ և Ս վարչության տեղեկանական առաջադրանքի, տրված 04.04.11թ.

Համաձայն նամակի անհրաժեշտ է կատարել Սյունիքի մարզի Գորիս - Վերիշեն Մ/Ճ ստորգետնյա գազատարի վերականգնման աշխատանքներ:

Համաձայն առաջադրանքի ՊԿ 3+86...ՊԿ 6+09 և ՊԿ 16+92...ՊԿ 17+39 հատվածներում գազատարը տեղադրել հենապյուների վրա, իսկ ՊԿ 13+76...ՊԿ 15+71 հատվածում մաքրել հողածածկույթը և վերականգնել հենապյուները:

Մնացած հատվածներում վերականգնել պաշտպանիչ գոտիները:

Նախագծով նախատեսված է վերգետնյա գազատարի նախկին մեկուսիչ ծածկույթի մաքրումը մետաղական խոզանակով և յուղաներկում 2 անգամ:

Նախագծով նախատեսված են անշարժ հենարաններ:

Նախագծով նախատեսված են մեկուսիչ ծածկույթի վերանորոգում հետևյալ տեղամասերում՝ ՊԿ 8+58, ՊԿ 8+95, ՊԿ 9+17, ՊԿ 10+89, ՊԿ 11+26 և ՊԿ 11+52, իսկ ՊԿ 6+09, ՊԿ 7+73 և ՊԿ 10+74 հատվածներում կատարել հողածածկույթի վերականգնում և վերամեկուսացում:

Նախագծվող Մ/Ճ գազատարը նախատեսված է պողպատյա խողովակից ф 325x7.0 մմ ԳՕՍՏ 10705-80, որի տեղադրումը նախատեսված է մետաղական հենապյուների վրա H=0.5; 1.5 մ բարձրությամբ, L=16.5 մ քայքով, և փողոցի անցման մասում H=5.0 մ բարձրության վրա, թեքությամբ ոչ պակաս i=0.003 դեպի գազի սնուցման ուղղության:

Կազմեց՝ Զ. Թովմասյան